Երկրորդ ընթերցում
Լրամշակված Նախագիծ

Կ-664[1]-19.09.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սնանկության մասին» 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-51-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում լրացնել նոր՝ «ե» ենթակետ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«ե) պահանջը բխում է օրենքի ուժով ֆիզիկական անձի համար առաջացած հարկեր, այլ վճարներ վճարելու պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի, ընդ որում նշված պարտավորությունը բռնագանձելու համար օրինական ուժի մեջ մտած վճիռ կամ դատավճիռ կամ անբողոքարկելի դարձած վարչական ակտ չի պահանջվում,»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասում «, բացառությամբ» բառից հետո լրացնել «սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ե» ենթակետով նախատեսված դեպքի, ինչպես նաեւ» բառերը:

Հոդված 3. Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասում կատարել հետեւյալ լրացումը եւ փոփոխությունը.

1) 1-ին նախադասությունը «բացառությամբ» բառից հետո լրացնել «այն ստուգումների եւ ուսումնասիրությունների, որոնք սկսվել են կամ որոնց վերաբերյալ հանձնարարագրերը հրապարակվել են մինչեւ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռը դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվելը, ինչպես նաեւ» բառերով,

2) երրորդ պարբերության «միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության եւ հանդիպակաց ուսումնասիրությունների» բառերը փոխարինել «հարկային մարմնի կողմից իրականացվող այն ստուգումների,

որոնք սկսվել են մինչեւ պարտապանի նկատմամբ լուծարման վարույթ սկսելու մասին որոշում կայացնելը կամ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 343-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ արտագնա ուսումնասիրությունների» բառերով:

Հոդված 4. Օրենքում՝ 20.1-ին հոդվածից հետո, լրացնել նոր՝ 20.2-րդ հոդված՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 20.2. Բողոքարկման ենթակա ակտերի բողոքարկման ժամկետները

1.Սույն օրենքով նախատեսված օրերով հաշվարկվող դատական ակտերի բողոքարկման ժամկետներում չեն ներառվում օրենսդրությամբ նախատեսված ոչ աշխատանքային օրերը:»:

Հոդված 5. Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «նախատեսված դեպքերի» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ սնանկության վարույթում բնականոն գործունեության արդյունքում առաջացող հարկային եւ այլ վճարների գծով պարտավորությունների» բառերը:

Հոդված 6. Օրենքի 44-րդ հոդվածում «երաշխիքով (երաշխավորությամբ) չապահովված» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ ապահովված իրավունքով չծանրաբեռնված» բառերը:

Հոդված 7. Օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«գ) աշխատանքային պայմանագրերից բխող պահանջները (ներառյալ՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչեւ լուծարումն առաջացած), բայց ոչ ավելի, քան պարտապանին սնանկ ճանաչելու պահին նախորդող 6 ամիսը, հեղինակային պայմանագրերով վարձատրությունների վճարումները եւ նույն ժամանակահատվածում առաջացած եկամտային հարկի, սոցիալական վճարի եւ դրոշմանիշային վճարի գումարները.»:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում

Կ-664[1]-19.09.2023-ՊԻ-011/1
Լրամշակված Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սնանկության մասին» 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-51-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում լրացնել նոր՝ «ե» ենթակետ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«ե) պահանջը բխում է օրենքի ուժով ֆիզիկական անձի համար առաջացած հարկեր, այլ վճարներ վճարելու պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի, ընդ որում նշված պարտավորությունը բռնագանձելու համար օրինական ուժի մեջ մտած վճիռ կամ դատավճիռ կամ անբողոքարկելի դարձած վարչական ակտ չի պահանջվում,»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասում «, բացառությամբ» բառից հետո լրացնել «սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ե» ենթակետով նախատեսված դեպքի, ինչպես նաև» բառերը:

~~***Հոդված 3.*** Օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասում «պատճենի ձեւով» բառերից հետո լրացնել «, իսկ էլեկտրոնային եղանակով կամ կապի այլ միջոցով ստացված նյութերը ներկայացվում է թղթի վրա տպված վիճակում: Դատարանը կարող է սահմանել էլեկտրոնային կամ կապի այլ միջոցով ստացված նյութերը ներկայացնելու այլ կարգ» բառերը:~~

Հոդված ~~4~~3. Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասում կատարել հետեւյալ լրացումը եւ փոփոխությունը.

1) 1-ին նախադասությունը «բացառությամբ» բառից հետո լրացնել «այն ստուգումների եւ ուսումնասիրությունների, որոնք սկսվել են կամ որոնց վերաբերյալ հանձնարարագրերը հրապարակվել են մինչեւ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռը դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվելը, ինչպես նաեւ» բառերով,

2) երրորդ պարբերության «միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության եւ հանդիպակաց ուսումնասիրությունների» բառերը փոխարինել «հարկային մարմնի կողմից իրականացվող այն ստուգումների, որոնք սկսվել են մինչեւ պարտապանի նկատմամբ լուծարման վարույթ սկսելու մասին որոշում կայացնելը կամ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 343-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ արտագնա ուսումնասիրությունների» բառերով:

Հոդված ~~5~~4. Օրենքում՝ 20.1-ին հոդվածից հետո, լրացնել նոր՝ 20.2-րդ հոդված՝ հետեւյալ բովանդակությամբ.

«*Հոդված 20.2. Բողոքարկման ենթակա ակտերի բողոքարկման ժամկետները*

1.Սույն օրենքով նախատեսված օրերով հաշվարկվող դատական ակտերի բողոքարկման ժամկետներում չեն ներառվում օրենսդրությամբ նախատեսված ոչ աշխատանքային օրերը:»:

Հոդված ~~6~~5. Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «նախատեսված դեպքերի» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ սնանկության վարույթում բնականոն գործունեության արդյունքում առաջացող հարկային եւ այլ վճարների գծով պարտավորությունների» բառերը:

Հոդված ~~7~~6. Օրենքի 44-րդ հոդվածում «երաշխիքով (երաշխավորությամբ) չապահովված» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ ապահովված իրավունքով չծանրաբեռնված» բառերը:

Հոդված ~~8~~7. Օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մաս~~ումի~~ ~~կատարել հետեւյալ փոփոխությունը եւ լրացումը.~~

~~1)~~ «գ» կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«գ) աշխատանքային պայմանագրերից բխող պահանջները (ներառյալ՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչեւ լուծարումն առաջացած), բայց ոչ ավելի, քան պարտապանին սնանկ ճանաչելու պահին նախորդող 6 ամիսը, հեղինակային պայմանագրերով վարձատրությունների վճարումները եւ նույն ժամանակահատվածում առաջացած եկամտային հարկի, սոցիալական վճարի եւ դրոշմանիշային վճարի գումարները.»:~~,~~

~~2) «դ» կետում «դատական ծախսերը» բառերից հետո լրացնել «, նաեւ այլ սնանկության վարույթով առաջացած պետական տուրքի գումարը» բառերը:~~

Հոդված ~~9~~8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-664[1]-19.09.2023-ՊԻ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Իրավական որոշակիությունից ելնելով՝ առաջարկում ենք ««Սնանկության մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով «Սնանկության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում լրացվող «ե» ենթակետում «պարտավորությունից» բառից հետո լրացնել «, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի» բառերը:	Ընդունվել է Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Հաշվի առնելով Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվող կարգավորումների բնույթը (Կ-696-06.11.2023-ՊԻ-011/1) առաջարկում ենք Նախագծից հանել 3-րդ հոդվածը:	Ընդունվել է Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ հոդված	Հաշվի առնելով, որ Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասով առաջարկվող կարգավորումն ընդգրկվել է Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով բնույթը (Կ-696-06.11.2023-ՊԻ-011/1) խմբագրվող «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետում, առաջարկում ենք Նախագծից հանել 8-րդ հոդվածի 2-րդ մասը:	Ընդունվել է Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է: